ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/2.8-2-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. փետրվարի 28-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի **2.8** կետով նախատեսված **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Մ.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

• Ծրագրի հավելված N2-ի **2.8** կետով նախատեսված **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով հաղթող ճանաչված 1 (մեկ) կազմակերպության՝ «Պրոդիջի» ՍՊԸ-ի կողմից վերախմբագրված ֆինանսական նախահաշվի քննարկում և վերոնշյալ կազմակերպության հետ պայմանագրի կնքում:

Լսեցին՝

- Հանձնաժողովին ներկայացվեց, որ մրցույթը հաղթող կազմակերպությունը ընդունել է Հանձնաժողովի կողմից ֆինանսական նախահաշիվը վերախմբագրելու վերաբերյալ առաջարկվող փոփոխությունները: Մասնավորապես՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջոցառման իրականացման աշխատանքները սկսվելու են պայմանագրի կնքման պահից, Ծրագրի իրականացման ժամկետները և բյուջեն վերանայել և վերախմբագրել՝ 10 ամսվա կտրվածքով:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի **2.8** կետով նախատեսված **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացման համար՝

- **«Պրոդիջի» ՍՊԸ**-ի հետ՝ 58.309.200 (հիսունութ միլիոն երեք հարյուր ինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ (այդ թվում՝ 9.718.200 (ինը միլիոն յոթ հարյուր տասնութ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ ԱԱՀ) գումարի չափով:

2. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) -

Ա.Մկրտչյան -

Ս.Ասլիզադյան -

Ս.Հովհաննիսյան -

Հ.Սահակյան -

Մ.Հակոբյան -

Շ.Հովսեփյան -